

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ՌԱԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2019-2023թթ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-2019

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի **առաքելությունը** մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինն առաջնահերթորեն կարևորող արհեստավարժ բանասեր-մանկավարժի, լրագրողի, թարգմանչի պատրաստումն է:

Ֆակուլտետի **տեսլականն** է՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձր որակի մշակույթի ձևավորումը, մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշներին:

Ֆակուլտետի **կրթական գործունեությունը** պետք է համահունչ լինի փոփոխվող միջավայրի առաջարկող պայմաններին.

- Մշտապես ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից կրթափորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
- Մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում հաշվառել ժամանակի կրթական պահանջը և կարևորել ուսանողության կարծիքը.
- Կրթական գործընթացում ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը:

Ֆակուլտետի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը պետք է նպաստի ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը:

Ֆակուլտետի **դաստիարակչական գործունեությունը** պետք է ուղղված լինի ուսանողների կողմից ազգային արժեքների կարևորման գիտակցության ամրակայմանը, իրենց իրավունքների և պարտականությունների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ընկալմանն ու համապատասխան վարքի դրսևորմանը:

Բանասիրության ֆակուլտետի **չրջանավարտն** աներկբա հարգանք պիտի ունենա իր մայրենիի հանդեպ, պետական լեզուն ընդունի որպես ազգային արժեք, հարգի պետական խորհրդանիշները, ազգային ավանդույթները և անհանդուրժող լինի հակասահմանադրական ու հակահասարակական դրսևորումների նկատմամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետ	Ակնկալվող արդյունք	Վտանգներ
Կրթական գործունեություն						
Բանասիրության ոլորտում մրցունակ կրթական ծրագրերի մշակում և ներդրում:	Ապահովել ՄԿԾ ճկունությունը	Ամբիոնի վարիչներ	ԱրՊՀ Որակի ապահովման կենտրոն, ԱրՊՀ Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին, ԱրՊՀ ամբիոններ	2019	Արդյունավետ ՄԿԾ	
Արհեստավարժ, կարողունակ մասնագետների պատրաստում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	Ձևավորել <i>գործատու-մասնագետ</i> փոխհարաբերությունների տարածք	Ֆակուլտետի խորհուրդ, ամբիոններ	ԱՀ ԿԳՍ, ԱԳՆ նախարարություն, Դպրոցներ	2019-2023		Ձևավորված ու վերահսկելի աշխատաշուկայի բացակայություն. օրենսդրական դաշտի փոփոխականություն
Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում:		Դեկան, ամբիոնների վարիչներ	Ֆակուլտետի ուսումնական գործընթացի իրականացմանը մասնակցող այլ ֆակուլտետների ամբիոններ (մանկավարժության, իրավունքի, քաղաքագիտության, փիլիսոփայության, տնտեսագիտության և այլն):	2019-2023	Բուհի առաքելությանը համարժեք և կրթական պահանջները բավարարող ուսումնական պլաններ	
Ֆակուլտետի ուսանողների մոտ բանասիրության արժևորման և մասնագիտության նկատմամբ պատասխանատվության		Դեկան, ամբիոնների վարիչներ	Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ՝ ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԽ և ՈւԳԸ կառույցներ	2019-2023		Հասարակության շրջանում մանկավարժի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության նվազում, սոցիալական-տնտեսական հարաբերությունների ազդեցություն

գիտակցության ձևավորում:						
Ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների, մեթոդների և տեխնոլոգիաների մշակում և ներդրում:	Կրթական գործընթացում ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը	Դեկան, ամբիոնների վարիչներ	ԱրՊՀ տեղեկատվական և տեխնոլոգիաների և համակարգերի սպասարկման բաժին	2019-2023		ա/Կրթական ծառայությունների մատուցման ավանդական մոտեցում բ/Բասախոսի ծանրաբեռնվածության ծավալային և ոչ խորքային բազմազանություն գ/Կարծարտիպերի առկայություն
Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում:	Ապահովել ուսանողի գործուն մասնակցությունը մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման աշխատանքներում	Դեկանատ, ամբիոններ	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնի, ՈւԽ, ՈւԳԸ-ի հետ	2019-2023	Բավարարված, կողմնորոշված ու գիտակցված պահանջներով ուսանող	
Ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետության բարձրացում:	Զնավորել ուսանողի կողմից ինքնուրույն աշխատանքը որպես կրթական կարևոր բաղադրիչ և մասնագիտական կարողությունները բացահայտելու միջոց ընկալելու մշակույթը	Ամբիոններ		2019-2023	Ստեղծագործական մղումներով, մշտապես նորին հետամուտ, նորը հետախուզող ուսանող	Ինքնուրույն աշխատանքի նկատմամբ անհետևողականություն ու արդյունավետության վերլուծության բացակայություն/թե՛ դասախոսական կազմի կողմից, թե՛ ուսանողների շրջանում/
Գիտահետազոտական						
Ամբիոնների կադրուժի երիտասարդացման շարունակականության ապահովում:		Ամբիոններ		2019-2023		
Պետական չափորոշիչներին և բուհի նպատակին համահունչ ուսումնամեթոդական	Ապահովել սովորողներին/հատկապես հեռակա ուսուցման համակարգի/	Ամբիոններ		2019-2023	Մասնագիտական աղբյուրագիտական հենքի ստեղծում	

գրականության, դասագրքերի, ձեռնարկների մշակում:	մասնագիտական առաջին ուղեցույցներով					
Սովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:	Ապահովել գիտահետազոտական ծրագրերում և միջոցառումներում սովորողների մասնակցությունը	Դեկանատ, ամբիոններ	ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի, ԱՀ գիտական կենտրոնի, ԱՀ և ՀՀ բուհերի հետ	2019-2023	Գիտական հետազոտության խնդիրները ճանաչող և դրանք լուծելուն պատրաստական և ունակ սովորող	
Կրթադաստիարակչական						
Ուսանողների մոտ ազգային մշակույթի արժեքների նկատմամբ վերաբերմունքի ստեղծում:	Սովորողի մոտ ձևավորել ազգային մտածողությամբ համաշխարհայինն ընկալելու գիտակցություն	Ամբիոններ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի լրատվության և հանրային կապերի բաժինների, ԱրՊՀ հայագիտական կենտրոնի, ԱՀ մշակույթի նախարարության, ԱՀ հեռուստատեսության, ԱՀ հասարակական կազմակերպությունների հետ	2019-2023	Ինքնաճանաչ, միջազգայնացման դաշտում բաց և համագործակցող անհատ	
Գիտաճանաչողական ու կրթադաստիարակչական հանդիպումների, քննարկումների շարունակականության ապահովում:	Նպաստել սովորողի՝ որպես հասարակական էակի պատասխանատվության մեծացմանը՝ իրազեկելով ու մասնակից դարձնելով նրան գործընթացներին	Դեկանատ, ամբիոններ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժինների հետ, Հայ-ամերիկյան համալսարանի շարունակական կրթության ԱՀ համակարգող կառույցի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արցախի գրասենյակի հետ	2019-2023	Քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ	
Արցախյան ազատամարտի մասին դասընթացների կազմակերպում, արիության դասերի վարում	Նպաստել իր պատմությանը ծանոթ և ժառանգաձի պատասխանատվությունը կրող անհատի գիտակցության	Դեկանատ, ամբիոններ	Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ՝ ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԽ և ՈւԳԸ կառույցներ, ԱրՊՀ	2019-2020		

	ձևավորմանը		Ֆակուլտետներ			
Հոբելյանական ցերեկույթների, տարվա ժամանակագրությանը համապատասխան միջոցառումների իրականացում	Ապահովել իրազեկվածությունը՝ ընթացիկ տարվա անցուդարձներին և խթանել ուսանողների ակտիվությունը	Դեկանատ, ամբիոններ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժինների հետ	2019-2023		Ոչ բոլոր սովորողներին ներգրավելու հնարավորություն

Որակի ապահովում

Մրցունակ և արհեստավարժ մասնագետների պատրաստում		Դեկանատ, ամբիոններ	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոն	2019-2023		
Վարչական աշխատակազմի աշխատանքների թափանցիկության մատչելիության ապահովում	Բարձրացնել ուսանողների իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակը	Դեկանատ	ԱրՊՀ ստորաբաժանումների հետ	2019-2023		
Դասախոսավարության և դասագործընթացի կազմակերպման աշխատանքների բարելավում և մշտակա լավարկում		Դեկան, ամբիոնների վարիչներ	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոն	2019-2023	Բարձրորակ կրթական ծառայություններ	

Կառավարման համակարգի կատարելագործում

Մասնակցություն ԱրՊՀ կառավարման համակարգի (ԱրՊՀ խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի խորհուրդ, ՈԻԽ, ՈւԳԸ) աշխատանքներին:		Դեկանատ, ամբիոններ, ուսանողություն		2019-2023		

Արտաքին կապեր

<p>Ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը շարժունության ծրագրերին</p>		<p>Դեկանատ, ամբիոններ, ՈՒԽ, ՈՒԳԸ</p>			<p>ա/Նոր ժամանակակից կրթափորձի ճանաչում և յուրացում. բ/Առկա հնարավորությունների արդյունավետության բարձրացում</p>	
<p>Հունգարիայի Պիտեր Պազման համալսարանի, Բեյրութի Հայկազյան համալսարանի, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի, ՀՀ բուհերի՝ Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, ԵՊՀ-ի, ՎՊՀ-ի, «Պանարմենիան մեդիա Գրուպի» հետ կապերի ամրապնդում</p>		<p>Դեկանատ, ամբիոններ</p>		<p>2019-2023</p>	<p>Ֆակուլտետի կապերի ընդլայնում, միջազգայնացում</p>	<p>ա/Դասախոսների, ուսանողների մեծ մասի օտար լեզվի ոչ բավարար իմացություն բ/Արտերկրյա բուհերի հետ ոչ անմիջական, միջնորդավորված կապի հնարավորություն</p>

Կարիերայի և շրջանավարտներին աջակցություն

<p>Լավագույն շրջանավարտներին աշխատանքով ապահովելու աջակցություն</p>	<p>ա/Համալրել ամբիոնները երիտասարդ կադրուժով, բ/Նպաստել մանկավարժական կոլեկտիվներում նրանց ընդգրկմանը</p>	<p>Դեկանատ, ամբիոններ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին</p>	<p>2019-2023</p>		<p>ա/ Աշխատաշուկայի առաջարկ-պահանջարկի ոչ ճիշտ՝ գնահատումը, արդյունքը՝ մասնագետների պահեստուժի մեծությունը բ/Մասնագետների պահեստուժի օգտագործման համակարգված մեխանիզմների բացակայությունը</p>
---	---	---------------------------	-------------------------------------	------------------	--	---

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
2019_2020 ուսումնական տարի**

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարված աշխատանք	Ակնկալվող արդյունք
<p>Բանասիրության ոլորտում մրցունակ հատուկ կրթական ծրագրերի մշակում և ներդրում:</p>	<p>Ապահովել ՀԿԾ ճկունությունը</p>	<p>Ամբիոնի վարիչներ, Կրթական ծրագրերի պատասխանատուներ, Ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողով</p>	<p>ԱրՊՀ Որակի ապահովման կենտրոն, ԱրՊՀ Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին, ԱրՊՀ ամբիոններ</p>	<p>ՄԵՊՏԵՄԲԵՐ, 2019թ. 1.Ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրերի վերջնարդյունքների սահմանում, քննարկում, ուսումնական պլանի քարտեզների մշակում, հաստատում ֆակուլտետի խորհրդում 2.Առարկայական նկարագրերի լրամշակում/արձ. N1, 22.08.2019/ ՀՈԿՏԵՄԲԵՐ_ՆՈՅԵՄԲԵՐ Կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի քննարկումների մասին ուսանողական համակազմի իրազեկվածության ապահովում, մասնակցության ընդլայնում/4.10.2019, 21.11.2019/ ՆՈՅԵՄԲԵՐ, 2019թ. Ֆակուլտետի Որակի ապահովման հանձնաժողովի ստեղծում/արձ. N4, 28.11.2019/ Որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքային պլանի ներկայացում, աշխատանքների մեկնարկ/արձ. N1, 28.11.2019, N2, 19.12.2019 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2019թ. Հայոց լեզու և գրականություն կրթական ծրագրի հավատարմագրման հայտի ներկայացում Դասընթացների վերջնարդյունքների իրացման և արդյունավետության մասին ՖՈԱՀ-ի 1-ին հարցման իրականացում՝ ուսանողության շրջանում/արձ. N2, 19.12.2019/</p>	<p>Արդյունավետ ՀԿԾ</p>

Արհեստավարժ, կարողունակ մասնագետների պատրաստում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	Ձևավորել <i>գործատու-մասնագետ</i> փոխհարաբերությունների տարածք	Ֆակուլտետի խորհուրդ, ամբիոններ	ԱՀ ԿԳՍ նախարարություն	ՄԵՊՏԵՄԲԵԸ, 2019թ. Ֆակուլտետի խորհրդում հրավիրյալ անդամների թեկնածուների հաստատում. հրավիրյալ անդամների ինստիտուտի ստեղծում/արձ.Ո2, 12.09.2019/	
Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում:		Դեկան, ամբիոնների վարիչներ	Ֆակուլտետի ուսումնական գործընթացի իրականացմանը մասնակցող այլ ֆակուլտետների ամբիոններ (մանկավարժության, իրավունքի, քաղաքագիտության, փիլիսոփաալության, տնտեսագիտության և այլն):	ՄԵՊՏԵՄԲԵԸ, 2019թ. Բոլոր մասնագիտությունների գծով բակլավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների վերակառուցում, ուսումնական պլանների վերլուծության իրականացում/արձ. Ո1, 22.08.2019/:	
Ֆակուլտետի ուսանողների մոտ բանասիրության արժևորման և մասնագիտության նկատմամբ պատասխանատվության գիտակցության ձևավորում:		Դեկան, ամբիոնների վարիչներ,	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի լրատվության և հանրային կապերի բաժիններ, փորձուսուցման բաժին	ՄԵՊՏԵՄԲԵԸ_ՀՈՒՆԻՄ Տարվա թեմատիկ ժամանակացույցները համապատասխան՝ ուսումնագիտական ծրագրերի, միջոցառումների, հանդիպումների իրականացում Փորձուսուցման նախապատրաստության խորհրդատվություններ, հանդիպումներ, ամփոփիչ քննարկումներ,	
Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում	Ապահովել ուսանողի գործուն մասնակցությունը մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման աշխատանքներում	Դեկան, տեսուչներ, մեթոդիստ, գործակարգավորիչ ամբիոնների վարիչներ, ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողով	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոն	ՄԵՊՏԵՄԲԵԸ_ՀՈՒՆԻՄ Ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում ուսանողական համակարգի ակտիվ ներկայության ապահովում, ուսումնական գործընթացին վերաբերող իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման ընթացքի, քննարկումների մասին ուսանողական համակարգի իրազեկվածության ապահովում, ըստ այդմ՝	Բավարարված, կողմնորոշված ու գիտակցված պահանջներով ուսանող

				մեծ պատասխանատվության ու պահանջատիրության հաշվեկշռի պահպանման արդյունավետության բարձրացում	
Ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետության բարձրացում	Ձևավորել ուսանողի կողմից ինքնուրույն աշխատանքը որպես կրթական կարևոր բաղադրիչ և մասնագիտական կարողությունները բացահայտելու միջոց ընկալելու մշակույթը	Ամբիոնի վարիչներ, դասախոսական համակազմ, ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողով		ՄԵՊՏԵՄԲԵՐ_ԴԵԿՏԵՄԲԵՐ Առարկայական նկարագրերում արտացոլված հանձնարարականների հստակեցում. ինքնուրույն աշխատանքների համակարգում կազմակերպված իրականացում և գնահատման սկզբունքների թափանցիկության ապահովում: Յուրաքանչյուր դասընթացի գծով ինքնուրույն աշխատանքների, տեսական նյութի մշակումների, թեմատիկ շնորհանդեսների, նախագծերի, ճանաչողական սահիկների պատրաստում՝ ներկայացնելով խմբային քննարկման: Ինքնուրույն աշխատանքի միջոցով նոր նախագծերի, մտահղացումների վերհանում, լավագույն օրինակի խրախուսում, հանրայնացում/	Ստեղծագործական մղումներով, մշտապես նորին հետամուտ, նորը հետախուզող ուսանող
Գիտահետազոտական					
Պետական չափորոշիչներին և բուհի նպատակին համահունչ ուսումնամեթոդական գրականության, դասագրքերի, ձեռնարկների մշակում:	Ապահովել սովորողներին/հատկապես հեռակա ուսուցման համակարգի/ մասնագիտական առաջին ուղեցույցներով	Դեկան, ամբիոնի վարիչներ, դասախոսական համակազմ	ԱրՊՀ գիտխորհրդին կից ուսումնամեթոդական, գիտական հանձնաժողովներ, ԱրՊՀ հրատարակչություն	ՄԵՊՏԵՄԲԵՐ Ֆակուլտետի խորհրդում երաշխավորվել և նշյալ ժամանակահատվածում հաստատվել ու տպագրության են երաշխավորվել 4 ուսումնամեթոդական ձեռնարկներ/ֆակուլտետի և ամբիոնների քվոտաների բաշխմամբ/արձ.Ո2, 12.09.2019/	

<p>Սովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:</p>	<p>Ապահովել գիտահետազոտական ծրագրերում և միջոցառումներում սովորողների մասնակցությունը գիտակցություն</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ, դասախոսական համակազմ</p>		<p>ՆՈՅԵՄԲԵՐ ԱրՊՀ 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակցություն՝ զեկուցումներով/ թվով՝ 11հոգի/</p>	
Կրթադաստիարակչական					
<p>Ուսանողների մոտ ազգային մշակույթի արժեքների նկատմամբ վերաբերմունքի ստեղծում</p>	<p>Սովորողի մոտ ձևավորել ազգային մտածողությամբ համաշխարհային ընկալելու գիտակցություն</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ, տեսուչներ, մեթոդիստ, գործակարգավորիչ, դասախոսական համակազմ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի լրատվության և հանրային կապերի բաժինների, ԱրՊՀ հայագիտական կենտրոնի, ԱՀ մշակույթի նախարարության, ԱՀ հեռուստատեսության, ԱՀ հասարակական կազմակերպությունների հետ</p>	<p>ՄԵՊՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ Արշավների կազմակերպում. <i>Ճանաչենք մեր երկիրը խորագրով Մշակույթը՝ ազգային ճանաչողություն</i>. ոչ ֆորմալ կրթության շրջանակում հանդիպում գրող, կինոգետ Դավիթ Մուրադյանի և ազգագրագետ Լևոն Աբրահամյանի հետ/11.10.2019/ 29.11.2019-Բանահյուսական ժառանգությունը՝ ինքնության պահպանման երաշխիք. դաս-միջոցառում</p>	
<p>Գիտաճանաչողական ու կրթադաստիարակչական հանդիպումների, քննարկումների շարունակականության ապահովում</p>	<p>Նպաստել սովորողի՝ որպես հասարակական էակի պատասխանատվության մեծացմանը՝ իրազեկելով ու մասնակից դարձնելով նրան գործընթացներին</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ, տեսուչներ, մեթոդիստ, գործակարգավորիչ, դասախոսական համակազմ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժինների հետ, Հայ-ամերիկյան համալսարանի շարունակական կրթության ԱՀ համակարգող կառույցի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արցախի գրասենյակի հետ</p>	<p>30.09.2019-Պավել Նույկին, մեկշաբաթյա դասընթաց 8.10.2019-Հայաստանի Ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դիմորդների հետ աշխատանքների համակարգող Աստղիկ Աթայան 18.10.2019-ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեչեր իրավագիտության և դիվանագիտության դպրոցի պրոֆեսոր Փոլ Արթուր Բերկման 18.10.2019- Շվոն Նեշ Մարշալ, Չարի խնդիրը 4.11.2019-Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Արթուր Ղազինյան 6.11.2019-Ալեքսանդր Իսկանդարյան 15.11.2019-Արցախի Կարմիր խաչի միջազգային</p>	

				կոմիտեի Արցախի գրասենյակի տեղեկատվության բաժնի պետ Էթերի Մուսայելյան	
Հոբելյանական ցերեկույթների, տարվա ժամանակագրությանը համապատասխան միջոցառումների իրականացում	Ապահովել իրազեկվածությունը՝ ընթացիկ տարվա անցուդարձներին և խթանել ուսանողների ակտիվությունը	Դեկան, ամբիոնի վարիչներ, տեսուչներ, մեթոդիստ, գործակարգավորիչ, դասախոսական համակազմ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժինների հետ	15.10.2019-Գևորգ Էմին-100-ամյակ 17.10.2019-Պարույր Սևակ-100-ամյակ 2.12.2019- Ա. Ղարիբյան-120 16.12.2019-Կոստան Զարյան-135 18.12.2019-Լեոնիդ Հուրունցին նվիրված գիտական սեմինար 22.01.2020-Սոկրատ Խանյան 90	
Արցախյան ազատամարտի մասին դասընթացների կազմակերպում, արիության դասերի վարում	Նպաստել իր պատմությանը ծանոթ և ժառանգածի պատասխանատվությունը կրող անհատի գիտակցության ձևավորմանը	Դեկան, դասախոսական համակազմ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժիններ	28.01.2020-Մշակութային ծրագրով այց գործառնա/համահամլսարանական միջոցառում/	
Որակի ապահովում					
Մրցունակ և արհեստավարժ մասնագետների պատրաստում		Դեկան, ամբիոնների վարիչներ, ՖՈԱՀ	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոն	Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների հավակնորդների մրցութային ընտրության անցկացում/արձ. N1, 22.08.2019/ Դասալսումների իրականացում/	
Դասախոսավարության և դասագործընթացի կազմակերպման աշխատանքների բարելավում և մշտակա լավարկում		Դեկան, ամբիոնների վարիչներ, ՖՈԱՀ	ԱրՊՀ որակի ապահովման կենտրոն	ՖՈԱՀ- ի հարցման արդյունքների ամփոփում՝ ամբիոններին հղվող հանձնարարականներով/արձ. N6, 17.02.2020/	
Կառավարման համակարգի կատարելագործում					
Մասնակցություն ԱրՊՀ կառավարման համակարգի (ԱրՊՀ խորհուրդ,		Դեկան, դեկանատ	ԱրՊՀ խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ,	Ֆակուլտետի նիստերի անցկացում/արձանագրություններ/ Ավագների ամենամսյա հանդիպումների	

գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի խորհուրդ, ՈԻԽ, ՈւԳԸ) աշխատանքներին			ֆակուլտետի խորհուրդ, ՖՈԻԽ, ՖՈՒԳԸ	իրականացում, ՖՈԻԽ, ՖՈՒԳԸ նիստերի իրականացում	
Արտաքին կապեր					
Ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը շարժունության ծրագրերին			ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան	1. Հունգարիայի Պիտեր Պազման համալսարանում մեկամյա ուսուցում- <i>Անգլերեն լեզու և գրականություն</i> <i>մասնագիտության</i> 3-րդ կուրսի ուսանողուհի Իրենա Թովմասյան	